

Անն օր կհրատարակուի: — Հատը 10 փարայ է: — Պոյխ բաժանորդ ըլլալ ուղտը մկ արծաթ Մէճիտ պիտի վճարէ 100 թուոց համար իսկ գաւառաց մէջ 25 դրչ, դարեկեալ 100 թուոց համար, թղթատարութեան ծախքէ ազատ ըլլալով: — Մանուցման ստորը 40 փարայ է մէկ անգամի համար: — Լքաղրիս վերաբերեալ նամակ եւ ուրիշ որ եւ է գրութիւն պէտք է ռեզիլ առ Տնօրէնն ի Գալաթիա Ս. Լուսաւորիչ եկեղեցոց վարի գրանը կից Նոր Գրատունը:

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Կերակէ օրը Սամաթիոյ կողմերը հետեւեալ դէպքը տեղի ունեցեր է, զոր հաւատարիմ ախանաասն մը պատմեց մեզ:

Սամաթիոյ Եհնիմահայլէի բնակիչներէն ժամագործ Յակոբ աղայի մայրը վախճանած ըլլալով, ի ներկայութեան նոյն թաղին քարոզիչ Սարմաթոբուդցի արժանապատիւ Գեորգ վարդապետին հանդիսաւոր յուզարկաւորութեամբ մարմնը Պալըզիի գերեզմանատունը տարուելու ատեն, Ալթը—մէրմէր ըսուած տեղը երեք զինուոր կազատահին: Սանք կուզեն եկեղեցական դասն ու յուզարկաւոր բազմութիւնը ճեղքել ու ցիրուցան ընելով անցնիլ: Հանդիսաղիր վարդապետը զանոնք կըռնէ և արդիլիկ կուզէ խնայունելով թէ խիստ անխել զործ մ'ըբած կըլլան և ծանր պատասխանատուութեան տակ կիյնան, եթէ անպատճառ խանդարեն այս կրօնական հանդէսն: Զինուորներն մը ափի չընելով անոր դարձեալ կպնդեն և կ'համան ճեղքելով անցնիլ: Սակայն վարդապետը կրօնական նա-

խանձախնդրութեամբ վառեալ՝ ամենայն քաջութեամբ դէմ կիենոց և ետ կնդէ զանոնք, որով վերջնպէս կըստիպուին հանդիսին քովէն անցնիլ շրթունքնին երեքցունելով:

Այս դէպքին վրայ, դադարն հաղիւ քիչ մը յառաջ դնացած է եղեր, և ահա փողոցի մը անկիւն ճիւղոր զինուորական մը ձեռքը տրցակ մը թուղթ և ձին վազցունելով հանդիսին դէմը կիշնէ: Աս ալ անանց նայելու իրեն առջև ելածը, կուզէ միևնոյն ընթացքով շարունակել ճամբան: — «Ի՛նչ կընես, կըսէ խիոյն քաջասիրտ վարդապետը, անոր ձիուն ասնձէն բռնելով չես գիտեր որ այս հանդէսը խանդարտը մեծ յանցանք մը գործած կըլլայ»: — «Ժուրնալ կտանիմ կոր, կըսէ ձիաւորը»: — «Յէրման անգամ ըլլայ ձեռքինդ, կայտերական կառավարութիւնը չնեքէր քեզ որ դադար մը կոխ կըրուես»: — Բայց սա ալ մտիկ ընել չուղէր, թէ և վերջնպէս ետ մըռելով քովնափ անցնիլ կալարատարի: Այս միջոցին հոն տեսնուեր են առջև երեք զինուորները, և միայն ունինդ կը եղեր են, սակայն շատերն այնպէս դուշակեր են թէ ասանք դըրած ըլլալու են:

ձիււորն , որ հանդէսը ճեղքելով անցնի և անարդանք ընէ դադարին և ներկայ եղողներուն կրօնական զգացման և հետևաբար ամբողջ ազգի մը կրօնքին :

Յաւով կնկատեմք որ տակաւին չը գիտցողներ կան թէ կայսերական բարեխնամ կառավարութիւնը որչափ խստիւ կարգիլէ ուրիշին կրօնքին աւարդանք ընելն և ուրիշին կրօնական զգացումը վիրաւորելը : Շատ անգամ տեսնուած և լսուած չէ՞ որ բարձրաստիճան պաշտօնատարք իրենց սրավար կառքերն անմիջապէս կեցուցած են յուղարկաւորութեան հանդիսի մը պատահած աստեճնին : Մնասարակոյս եմք որ Նորին կայսերական վեհափառութիւնն անգամ պիտի բարեհաճի այսպէս ընել , եթէ յուղարկաւորական հանդէս մը դէմն ելնէ : Ո՛ր մնացին տրեմն , սոսկական կարգի զինուորներ : Ասոնք թնղ մեծ բազմ մը համարին իրենց , եթէ չվնասուին և չը սրատուին իրենց այս ծայրագոյն յանդրգնութեան համար : Լուած չե՞ն որ ո՛չ միայն մէկ քանի զինուորք այլ և զօրաց գունդեր իրենց ճամբան չլալունակելով մէկ կողմ կեցած և պատուով ճամբաց տուած են այսպիսի կրօնական հանդէսներու :

Ի վերջոյ անհրաժեշտ պարտաւորութիւն կհամարեմք հրապարակաւ շնորհակալութիւն մատուցանել Սամաթիոյ Նէնիմահալլէի քարտղիչ արժանապատիւ Գէորգ վարդապետին , որ կրօնական նախանձու և քաջաբնասութեամբ վառեալ անդի չէ տուեր հանդիսին բոլորովին խանդարման , թէև ի հարկէ բաւական չփութութիւն եղած է յուղարկաւորաց մէջ : Գէորգ

վարդապետը ազգային վարձատրութեան արժանի է , եկեղեցւոյն անվեհեր պաշտպան կենալուն համար : Գէորգ վարդապետը կայսերական կառավարութեան վարձատրութեան արժանի է , անոր բարեսէր կամացը դէմ վարուելու թող չտալուն համար :

Մեր օգոստոսիառ Տէրը մեզի աւնն ազատութիւն շնորհած է և կը շնորհէ : Կրնանք վայելել զայն , եթէ ճանչնանք մեր իրաւունքը , և թոյլ չտանք որ սանակոխ ըլլայ : Նորին վեհափառութեան կառավարութիւնը չը ներէր որ ննջեցելոյ մը դադարը կոխ կըռտուի , մարդկային վերջին մնացորդ մը անարգուի : Գիտնալու է այս և ասոր հակառակ վարուողին դէմ դնելու է առանց երբէք վախնալու : Փոքրոգիւթիւնը աղէտ ու անարար մարդոց բաժինն է : Ասլլի ուրեմն , Գէորգ վարդապետը :

Կէյվէի էջմէ գիւղէն կղրեն ազրիլ 20 թուով :

Կյիշեն անշուշտ ընթերցողք տեղւոյս Տէր Բարթողոմէոս քահանային ի խոստովանութենէ արդիւուրը Նիկողոս եպիսկոպոսի անխիղճ հրամանաւ Ս. Պատարագ մատուցանել Վրնալու համար որուն համար Տեղապահ Ս. Հօր եւ Խառն ժողովոյ բողոքած էինք , մեր խեղճ վիճակին եւ Նիկողոս եպիսկոպոսի վարուց համար փոքր ի շատ : Տեղապահ Ս. Հօրմէն երկու նամակ ընդունեցանք , մէկը երկու ժամ հեռաւորութիւն ունեցող Ղընճըլար գիւղի Տէր Յովհաննէս քահանային , և միւսը մէկ ժամ հեռաւորութեամբ Միջագիւղի Տէր Թադէոս Աւագ երիցու :

Պատարժան Տէր Յովհաննէս քահանայն Ղընճըլարու հլութեամբ ընդունեց Տեղապահ Ս. Հօր նամակը , Բայց Մի-

Նազիւղ Տէր Թագէտոսին նամակը արուե-
լէն . զի նի՛ տեղուցս արժ . քահանայն հոն
կերթայ խոստովանելու աւելի մօտ ըլլա-
լուն համար , որուն կպատասխանէ թէ
« ես Տեղապահ չեմ ձանձնար , մինչեւ որ
Նիկոզոս եպիսկոպոս հրաման չտայ , եւ
թէ Երամանաց ազաները գիտեն . կուզես
ի միասին երթանք ազայներուն . եթէ
հրաման տան կխոստովանցուենմ . իսկ ե-
թէ ոչ , անկարելի է » որսլ մեր ծերու-
նազարդ քահանայն պարտաւորելով ու-
նայնաձեռն յետս դառնալ , հետեւեալ օրը
Ղընճըլար զիւղը կերթայ որ տեղուցն
արժ . քահանայն , ինչպէս որ վերը յիշե-
ցինք , սիրով կխոստովանցուենէ մինչեւ
ցարդ , որմէն շորհակալ եւք մեծապէս :
Բայց ի՛նչ ըսեմք այն տղէտ Տէր Թա-
գէտ քահանային . ըսելիք չկայ , իրա-
ւունք ունի . խոստովաներ է չէ խոստ-
վաներ , ի՛նչ կայ . բայց Տեղապահ Ս .
Հայրը դրած է եղեր « Եթէ չի խոստ-
վանցուենք , պատասխանատու կըլլաք »
եւայն . վասն զի արդէն քիչ շատ նա փոր-
ձառու եղած է որ ըրածը քովը կմնայ .
ի՛նչ կայ — Այ ինչ կըսէ . փնտոող մի կա՛յ
— ամենեւին . տղէտ եղիլ , հնազանդու-
թիւն մի ըներ . փարա ա՛ռ , պոսկ ըրէ
վաւեր անվաւեր . կրնակդ իշխանի մը
սուր . բան չկայ , բան չսուին նէ թող
լրագրի գրեն . Առաջնորդը ազայներու
խօսքէն դուրս չելլեր . իսկ առաջնորդն
ալ ուղածը կրնայ ընել՝ փնտոող չկայ
փնտոել ալ չըլլար , ըսելովն իրաւունք
ունին ձեռքերնէն եկածները ետ չի ձգեր
Այս եղելութենէն մակարեւելով գաւա-
ռային ազգայնոց կողմանէ խոստովանանք
մը ունիմք Ձեզ հաղորդելու , հրատար-
կեցէք . բայց չըլլայ որ շատ մարդ լսէ
ու գիտնայ . լսեն ալ նէ հոգ չէ . վասն
զի ամենեւին չեն հաւար . լրագիրները
սուտ ու մուտ՝ եղած չեղածը՝ փարայ
կառնեն ու կհրատարակեն կրսեն , բայց
հաւատացողներ ալ ըլլան նէ վրան հոգ քա-

չենք հօտը դուրս չը հանենք աէ , ներքեւ
ձեռաց գրողները գտնենք , եւ պատր-
ուակներով ու հնարքներով հախերնէն
զանք կըսեն եւ լտածուն անկան չեն
տար , ուստի մենք խոստովանանքնիս ը-
սենք դուք ալ հրատարակեցէք . խիստ
շատ անգամ գաւառայնոց կողմանէ բո-
ղոքներ եղած են թէ ուղղակի եւ թէ
լրագրաց միջոցաւ ի Պատրիարքարան
չատերը լսելի չըլլար . եւ այնպէս կղերէ
եւ իշխաններէ հարստահարուելով հաղար
ու մէկ երկիւղներ յանձն կառնուի . վա-
սըն զի գաւառներէն բողոք դացած Ժա-
մանակ իրենց հարստահարիչներուն գտնէ
մէկ փոքրիկ աղղարարութիւն մը ընել
տալ է նպատակին . բայց ասոնց ամե-
նուն պատասխան « սուտ են սխալ են » ը-
սելով ո՛չ դատ կըլլուի՝ եւ ոչ դատաս-
տան : Ա՛վ խեղճ գաւառային ազգային ,
եթէ չը գրէիք ու չիմացուէիք , խիստ
քիչ էր քու պատիժդ : Փարայ չունիս որ
երթաս ամբաներով նստիս Պոլիս դատ բա-
նաս . դատ բաց՝ քեզ ո՛վ կձանձնայ . վը-
րադ՝ դուրսդ տեղովը չէ , աղքատ ես
պատիւ չունիս , իսկ գէ՛մնադ եպիսկոպոս
է երեւելի անձ է . դուն քանի՛ ստակի
մարդ ես . դիցուք թէ իրաւունք ալ ու-
նիս , հիմակ քեզի համար այս ինչ եպիս-
կոպոսին այս ինչ քահանային կամ աղա-
ջին խաթըր դպելու՞ է . ինչ ընեմք թէ
գիւղացի էք եւ թէ աղքատ , կհաւտաց-
ուի՞ գրածներնուդ . — բայց նախ եւ ա-
ռաջ եկէք հաստատեցէք որ գիւղացիք
ալ մարդ են եւ մարդէ ելած . կըսեն ,
կտեսնեն , ու կըղան , եւ կղերաց ու իշ-
խանաց համար ստեղծուած չեն , ու յետ
այնորիկ ելէք դատ եղիք որ Ձեր խօս-
քերուն կարեւորութիւն տրուելով ըսած-
նիդ ալ հասկցուի ու լսուի : Մեռի՛ր մե-
ռի՛ր , գաւառական հայ , որ խալսիս . այլ
« դատ արայցէ Տէր ընդ մեզ եւ ընդ
ձեզ » : Սակայն եթէ կարելի է մեր խօս-
քը լսուիլ Նիկոզիւղիոյ գաւառը վախճուն

հազար հայ ժողովուրդ ունի տարեկան մէկ մէկ դուրուշ վճարելով վաթսուն հազար դուրուշ կրնէ . իսկ քսանական փարա տուած ժամանակին երեսուն հազար դուրուշ . կարծեսք թէ այսքան ստակով բաւական կըլլայ եթէ վիճակիս համար քննիչ մը կարգուի յատուկ . զոր շնորհակալութեամբ կընդունին անշուշտ բոլոր գաւառական ազգայինք :

ԽԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

Կիմանանք թէ դանձուց պաշտօնեայն 13 միլիոնի նոր փոխառութիւն մը պիտի ընէ որ պիտի վճարուի Եւրոպայի մէջ յունիս 30ին :

Ղարաթիա Եւրոպէք-գալարըրմ ըսուած փողոցը հին պարիսպի մը մնացորդը փլեխով երէկ առտու գեղադարձի և դերձակի մը խանութներ հիմն ի վեր տապալեր է . թէև մարդէ մեռեր բայց բաւական մեծ կրասներ պատճառեր է այս գեղքէն :

Երեսօթի լրագրէն կիմանանք թէ կայսերական դորքը կզգոյն մէջ ոչ միայն զինուորական պարտքը կատարեր է , ապատամբութիւնը բնաջինջ ընելով . այլ միանդամայն ամեն շանք ըրեր է ճամբաներ բանալու և բոլոր կզգոյն երթեւեկութիւնը և յարաբերութիւնը դիւրացունելու համար . այնպէս որ կզգեցիք հիմա շատ հանդիստ կընեն և մէկ ծայրէն միւս ծայրը գիւրաւ կընան երթեւեկել :

Կրտուի թէ , այս տարի Գերմանիոյ մէջ ծաղկանց արտեւտահան գէս մը պիտի բացուի , որով ի հարկէ հոն պիտի ժողվուին շատ երևելի պարտիզպաններ և ծաղիկ ու ծառի սիլահար անձինք : Կյուսացուի որ

դայն տեսնելու պիտի ելնէ Երամեան փեմաշուք կարագեա պէյն ալ , որ Տաճկաստանի մէջ ծաղիկ ու պարտիզի առաջին սիրահարն է գրեթէ , և վարորդի ծայրը անթիւ լիբաներ թափած է ու միշտ կթափէ իւր այս բազձանքն յազեցունելու համար :

Խասպիոյ պաշտօնէից ժողովը հրաժարեր է , երեսփոխանաց ժողովին մէջ հակառակ կուսակցութեան զօրանալուն պատճառաւ : Թագաւորն ընդունել է անոնց հրաժարականը , բայց իրենց պաշտօնը պիտի պահեն մինչև ցնոր ընտրութիւն :

Ամերիկայի մէկ բժշկային դըպրոցէն բժշկական վկայողիւր տրուեր է իրական սեռէ 12 ուսանողաց :

Աւստրիոյ կառավարութիւնը որոշեր է որ Գաղղիոյ պէս 20 և 40 ֆրանդնոց ոսկի դրամ կիտել այս :

Ամերիկայի ծախերէքք ամերիկեան վաճառականական շոգենաւու մը կաթման պայթելով , շոգենաւն և մէջը գանուայներէն 50-60 հոգի ընկղմեր են :

Հայ ազգիանց կարիւսելու շիւթին ճանբան , և Լայ երիտասարդաց շապուրիանց , և Լայ կանանց շապուրիանց : — Գրեց ասիկին Յրարիոն : — Երեք դուրուշի կը ծախուի բոլոր Հայ գրավաճառաց քով :

Պալատ Ս . Հրեշտակապետ եկեղեցոյն փողոցը ծախու տուն մը կայ : Ուրպը պէտք է Ունդափան Խաղան ճիի 665 թիւ խանութը Մ . Դարբիկ աղային հետ տեսնուի :

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԵՐ
Հ . Թ . ԱԼԱՃԱՃԱՆ

ՅՈԱԳՐՈՒԹԻՒՆ Գ . Յ . ԳԻՐԳՃԵԱՆ